

# Հագուստ անապահով երեխաներին

Շուշիի անապահով ընտանիքների երեխաներին Հիմնադրամը ձեռքով տաք հագուստ է տրամադրում՝ համաձայն քաղաքի սոցիալական ծառայությունների կողմից կազմված ցուցակների:

## Սեպտեմբերի 1

Հիմնադրամը Շուշիի 2007-2008թթ. ուսումնական տարվա շուշեցի 67 առաջին դասարանցիների համար սեպտեմբերի 1-ի կապակցությամբ հանձնել է գրենական պիտույքների նվեր-փաթեթներ: Ի լրումն, Հիմնադրամը Շուշիի 3 հանրակրթական դպրոցներին տրամադրել է տեսանվագարկիչներ:

Հիմնադրամը մտադիր է շարունակել աջակցությունը շուշեցի երեխաներին, ինչպես նաև դպրոցներին, այդ թվում նաև մշակութային և կրթական միջոցառումների կազմակերպման միջոցով:

